


ՄԱՅՔԼ ՖԱՐԱԴԵՅ



1791-1867

Գիտնականն այն մարդն է, որը ձգտում է լսել յուրաքանչյուր առաջարկ, սակայն ինքն է որոշում՝ ճշմարիտ է դա, թե՞ ոչ: Նա չպետք է ունենա նախընտրելի վարկած, չպետք է տուրք տա հեղինակություններին: Նա պետք է հարգալից լինի ոչ թե անհատի, այլ հետազոտության առարկայի նկատմամբ: Եթե այդ հատկություններին գումարվում է նրա աշխատասիրությունը, ապա նա կարող է բնության տաճարի վարագույրը բարձրացնելու հույս ունենալ:

Անգլիացի մեծագույն ֆիզիկոս և քիմիկոս Մայքլ Ֆարադեյի այս խոսքերն առավել չափով բնութագրում են հենց իրեն: Դարբնի որդին, չունենալով նույնիսկ միջնակարգ կրթություն, իր զարմանալի մարդկային որակներով գիտության ոլորտում հասավ քչերին վճակված հաջողությունների: Ֆարադեյն այն հազվագյուտ գիտնականներից է, որի հայտնագործությունները որոշիչ դեր ունեցան մարդկային քաղաքակրթության զարգացման մեջ:

Ֆարադեյը ծնվել է Լոնդոնում: Նա 13 տարեկանում որպես առաքիչ աշխատանքի է անցնում գրախանութի տիրոջ մոտ, որտեղ զբաղվում է կազմարարությամբ: Այդ ընթացքում Ֆարադեյը համառորեն զբաղվում է ինքնակրթությամբ՝ կարդալով ֆիզիկայի և քիմիայի իրեն հասանելի ամբողջ գրականությունը: 22 տարեկանում նա որպես լաբորանտ աշխատանքի է անցնում Լոնդոնի թագավորական ինստիտուտում: Արդեն այդ ժամանակ ի հայտ են գալիս նրա աշխատասիրությունը, փորձեր կատարելու փութաջանությունը: Իր ամբողջ կյանքում Ֆարադեյը կատարում է մոտ 30 000 փորձ: 33 տարեկանում նա ընտրվում է Լոնդոնի թագավորական ընկերության անդամ:

1831 թ. Ֆարադեյը հայտնաբերում է էլեկտրամագնիսական մակածման երևույթը, իսկ 1833–1834 թթ. նա ուսումնասիրում է էլեկտրոլիտներով անցնող հոսանքի օրինակաչափությունները և հայտնագործում է էլեկտրոլիզի օրենքները: Ֆարադեյը ներմուծել է էլեկտրական դաշտ և մագնիսական դաշտ հասկացություններ:

րը, ուժագծերի գաղափարը, առաջ է քաշել էլեկտրամագնիսական դաշտի գոյության գաղափարը և այլն: Նա առաջին անգամ գիտության մեջ ներմուծել է «իոն», «կաթոդ», «անոդ», «էլեկտրոլիտ», «դիէլեկտրիկ», «դիամագնիսականություն», «պարամագնիսականություն» եզրույթները:

Ժամանակակիցները գրում են, որ Ֆարադեյը միջահասակ, առույգ, ուրախ մարդ էր: Նրան գրավում էր բնությունը, շատ էր սիրում զբոսնել այգում, դիտել արևածագը: Նա սիրում էր թատրոնը և գրականությունը: Բայի բացառիկ համեստությունից, Ֆարադեյն աչքի էր ընկնում անսովոր աշխատասիրությամբ: Նա աշխատում էր ամեն օր, իսկ հանգստյան օրերին հանրային դասախոսություններ էր կարդում: Ֆարադեյը երբեք փողի համար չէր աշխատում: Նա չարչարվում էր միայն գիտության համար: Այդ պատճառով նա ապրում էր շատ համեստ: Չունենալով ոչինչ՝ Ֆարադեյը մահացավ նույնքան աղքատ, որքան կյանքի սկզբում, սակայն պատմության մեջ մնաց որպես գիտնական, որի հայտնագործությունները որոշիչ դեր խաղացին քաղաքակրթության զարգացման մեջ: